

Շահանգ ՊԵՏՐՈՍՅԱՆ
«Հայաստանում ֆրանսիական քոլեջ»
հիմնադրամ

**ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԵՆԹԱՈՂԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԴԱՐՁՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ**

Գործառնական որևէ լեզվաճանաչում միասեռ չէ, այլ ունի իր ենթաճանաչումը: Այս տեսակետից բազմազան դրսևորումներով մասնավորապես աչքի է ընկնում խոսակցական ֆրանսերենը, որը բազմաշերտ մի համակարգ է, ինչն իր ցայտուն արտահայտությունն է գտնում նաև դարձվածաբանական միավորներում, որոնք օժտված են տվյալ ենթաճանաչումը յուրահատուկ պատկերավորությամբ ու արտահայտչականությամբ և կազմում են ֆրանսերենի ընդհանուր դարձվածապաշարի անբաժանելի մասը՝ հարստացնելով այն բազմապիսի գունեղ երանգներով:

***Բանալի բառեր.** ոճ, ենթաճանաչում, ոճական առանձնահատկություն, ենթաճանաչում դարձվածաբանական միավոր, դարձվածապաշար, արտահայտչականություն*

Հոդվածում ներկայացվում են խոսակցական ֆրանսերենի ենթաճանաչումը, դրանց դասակարգումն ու դրսևորումները դարձվածաբանական միավորներում՝ հայերեն համարժեքներով:

Լեզվական ենթաճանաչումը իրավիճակից բխող արտահայտման ձև է, որն իրեն է հարմարեցնում բառապաշարը, ձևաբանությունն ու շարահյուսությունը, երբեմն նաև ձայնի տոնայնությունը: Ֆրանսերենն ունի լեզվական մի շարք ենթաճանաչում, որոնք նպաստում են խոսքը իրադրությանն ավելի համարժեք դարձնելուն:

Մեզ հետաքրքրում են խոսակցական ֆրանսերենի (français parlé) ենթաճանաչումը (ռեգիստրները):

Ընդհանուր խոսակցական ֆրանսերենը առավելապես բնորոշ է բանավոր խոսքին: Այն ամբողջովին կանոնակարգված չէ, սակայն ընդունելի և կիրառելի է առօրյա պայմաններում, քանի որ որոշ շեղումներով հանդերձ պահպանում է քերականական հիմնական կանոնները և հեշտացնում հաղորդակցումը: Լինելով ավելի անկաշկանդ, քան գրական ոճը՝ խոսակցական ֆրանսերենը օգտագործվում է հատկապես մտերիմների, սոցիալական միևնույն խմբին պատկանող մարդկանց, ընտանիքի անդամների, դասընկերների, աշխատանքային ընկերների հետ հաղորդակցվելիս և ենթադրում է ստորակարգման բացակայություն խոսակիցների միջև, որոնք միմյանց քաջաձանոթ են:

Ընդհանուր խոսակցական ֆրանսերենին հատուկ են.

1. Պարզեցված և հաճախ մոտավոր շարահյուսությունը, որտեղ նախադասությունները կարճ են, երբեմն անավարտ, կամ ընդհակառակը՝ ծավալուն: Հաճախակի են բացականչությունները, բացթողումները, հավելաբանությունները, անպատեհ հարադրությունները.

Au bureau un de mes collègues sa femme elle a eu un bébé (La femme d'un collègue du bureau a eu un bébé նախադասության փոխարեն):

2. Գեռևս ոչ բառայնացած (lexicalisé) հապավումներ.

T'es là ?, phone (Tu es là ?, téléphone)

3. Ուղղակի հարցի որոշ ձևեր, հնչերանգի փոփոխություն, “est-ce que” հարցական ձևի կիրառում շրջադասության փոխարեն.

Tu m'appelles d'où ? D'où est-ce que tu m'appelles ?

4. Յուրահատուկ բառապաշար.

Pacsac, placoter (sac à dos- ի և bavarder-ի փոխարեն)

5. Ժխտական “ne” մասնիկի սղում.

J'ai pas bien dormi cette nuit (Je n'ai pas bien dormi cette nuit).

6. “On” անորոշ դերանվան գործածություն “nous” ենթակա անձնական դերանվան փոխարեն.

Nous, on viendra (Nous, nous viendrons)

7. Արագ արտասանություն, որը ենթադրում է ձայնավորի և համը “e”-ի սղում, ինչն էլ առաջացնում է բաղաձայնների կուտակում.

P'pa, que f'ras-tu ç't aprèm (Papa, que feras-tu cet après-midi) և այլն:

Մեզ հետաքրքրում են ընդհանուր խոսակցական ֆրասերենի ենթաոճերը և դրանց բառային ու ոճախմաստային աձանձնահատկությունները ֆրանսերենի դարձվածաբանական միավորներում: Ուսումնասիրված լեզվանյութը թույլ է տալիս առանձնացնել հետևյալ շերտերը.

ա) միատարր (ընդհանուր, համասեռ, ստանդարտ) խոսելաոճ,

բ) մտերմիկ-խոսակցական ենթաոճ,

գ) հասարակաբան, ժողովրդական ենթաոճ,

դ) գռեհիկ, գռեհկաբան ենթաոճ,

ե) ժարգոնային ենթաոճ:

Խոսակցական ֆրանսերենի նշյալ ենթաոճերը միշտ չէ, որ հնարավոր է հստակ տարանջատել: Եվ պատահական չէ, որ ֆրանսերենի բացատրական ու դարձվածաբանական բառարաններում, ինչպես նաև լեզվաբանական ուսումնասիրություններում երբեմն հանդիպում ենք միանգամայն տարբեր, նույնիսկ իրարամերժ նշումների՝ տվյալ միավորի այս կամ այն ոճին կամ ենթաոճին պատկանելու վերաբերյալ, քանի որ հաճախ առաջնային է դառնում բառարանագրի կամ հետազոտողի սուբյեկտիվ ընկալումն ու լեզվագագողությունը: Եթե նկատի առնենք նաև այն հանգամանքը, որ խոսակցական ենթաոճում ծնունդ առած բազում դարձվածամիավորներ ժամանակի ընթացքում աստիճանաբար մուտք են գործում գրական լեզու և ամրանում այնտեղ, ապա շոշափելի կդառնա նաև ժամանակային գործոնի դերը՝ հրատարակման տարբեր թվականներ ունեցող աշխատություններում առկա նշումների անհամապատասխանությունը մեկնաբանելու համար.

Վերոբերյալ հաջորդականությամբ ներկայացնենք յուրաքանչյուր ենթաոճին պատկանող դարձվածաբանական միավորների օրինակներ՝

հայերեն բառացի կամ մոտավոր թարգմանություններով և հնարավոր համարժեքներով.

ա) միատարր (ընդհանուր, համասեռ, ստանդարտ) խոսելաճճ

c'est pas évident (բառացի՝ ակնհայտ, ակներև չէ)- դժվար թե, հազիվ թե,

faire des étincelles (բառացի՝ կայծկլտալ, շողշողալ, ցոլարձակել)- փայլուն հաջողության հասնել, շլացնել, ապշեցնել.

tirer une épine du pied de զ՛ն (բառացի՝ մեկի ոտքից փուշ հանել)- մեկի մատից փուշ հանել:

բ) մտերմիկ – խոսակցական ենթաճճ

ça ne m'empêcherait pas de dormir (բառացի՝ դա ինձ չի խանգարի մնջել) – դրա պատճառով քունը աչքիցս չի փախչի, դա ինձ համար այնքան էլ կարևոր չէ.

être dans un état-(բառացի՝ ինչ-որ վիճակում լինել)- հողի լինել (հմմտ. ռուս. *быть в положении*).

crois ça et bois de l'eau fraîche (բառացի՝ հավատա դրան և սառը ջուր խմիր)- գրպանդ լայն բաց, ախորժակ պահիր:

գ) հասարակական, ժողովրդախոսակցական ենթաճճ

les lâcher avec des élastiques (բառացի՝ ռետիներիզով բաց թողնել)- ձեռքը փակ լինել, դժկամությամբ ու ժլատորեն դրամ տալ՝ տրամադրել.

étagère à mégot (բառացի՝ ծխախոտի մնացորդի, ծխուկի դարակ՝ հենատախտակ) – ականջ.

crever l'écran (բառացի՝ էկրանը տանջահարել)- անընդհատ էկրանին լինել՝ երևալ, բազում կինոնկարներում խաղալ.

il y a de l'eau dans le gaz (բառացի՝ ջրի մեջ գազ կա)- վերահաս վեճի՝ վիճաբանության հոտ է գալիս, նշաններ են երևում, մթնոլորտը շիկանում է.

c'est à encadrer (բառացի՝ շրջանակելու, շրջանակի մեջ դնելու բան է)- ծիծաղելի՝ ծիծաղաշարժ՝ ծաղրաշարժ մի բան է (հեզն.):

դ) գռեհիկ, գռեհկաբան ենթաճճ

ferme ta gueule ! ta gueule ! – ռեխդ փակի՛ր,

envoyer dinguer զ՛ն – մեկին ուղ անել, վռնդել, գրողի ծոցն ուղարկել:

ե) ժարգոնային ենթաճճ

se faire une picouse – թմրադեղ սրսկվել, «ծակվել».

être au pognon – փողի տոպրակ՝ հարուստ՝ ունևոր լինել:

Որևէ հասկացության զանազան արտահայտչաճևերը դարձվաճա- միավորների մեջ ավելի ակներև են դառնում բարձր ոճը, ընդհանուր գրական ոճը և խոսակցականն ու նրա ենթաճևերը զուգադրելիս:

Օրինակ՝

Rire très fort

1. niveau soutenu – rire à gorge déployée; rire aux éclats.

2. niveau littéraire normal – rire aux larmes; rire à en pleurer.

3. niveau familier – rire à se décrocher la mâchoire; rire comme un bossu; rire comme une baleine.

4. niveau vulgaire – se dilater la rate; se fendre la poire.
5. niveau argotique – se troncher la gueule.

Վերոնշյալ հայերեն տարբերակները պարզորոշ մատնացույց են անում, որ դարձվածաբանական միավորների հիմքում ընկած պատկերները տարբեր լեզուներում կարող են մի դեպքում ամբողջությամբ կամ մասամբ համընկնել, մեկ այլ դեպքում (և առավելապես)՝ ոչ, ինչը տարբեր մշակույթների, ազգային ուրույն լեզվամտածողության ու պատկերընկալման հետևանք է: Խոսակցական ֆրանսերենի ենթաոճերին պատկանող դարձվածամիավորներում առկա են ոճական ամենատարբեր հնարներ՝ բանադարձումներ ու դարձույթներ, որոնք շոշափելի արտահայտչականություն են հաղորդում դրանց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Եզեկյան Լ. Հայոց լեզվի ոճագիտություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2003:
2. Bacry P. Les figures de style. Paris: Edition Belin, 1992.
3. Fromilhague C., Sancier A. Introduction à l'analyse stylistique. Paris: Bordas, 1991.
4. Herschberg Pierrot A. Stylistique de la prose. Paris: Edition Belin, 2003.
5. Moliné G. Eléments de stylistique française. Paris: Presses Universitaire de France, 1986.

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Բեդիրյան Պ. Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011:
2. Սուքիասյան Ա. , Գալստյան Ս. , Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1975:
3. Ashraf M., Miannay D. Dictionnaire des expressions idiomatiques. Librairie Générale Française, 1995.
4. Rey A. et Chantreau S. Dictionnaire des expressions et locutions. Paris: Le Robert, 1997.

ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

1. Intellego, Les niveaux de langue // URL: <http://www.intellego.fr/> (mai 2006)
2. Bertrand Boutin, Les niveaux de langue // URL: http://www.bertrandboutin.ca/Folder_151_Grammaire/A_c_niveaux.htm (mai 2005)
3. Etudes Littéraires, Niveaux de langage (registres de langue) // URL: <http://www.etudes-litteraires.com/figures-de-style/niveaux-de-langage.php>

4. Ffracol: Les registres de langue // URL: <http://ffracol.perso.sfr.fr/> (septembre 2000)
5. Bibliothèque virtuelle: Les registres et les niveaux de langue // URL: <http://bv.allo-prof.qc.ca/francais/la-langue/les-registres-et-les-niveaux-de-langue.aspx>
6. CPST/GRIL: Niveaux et registre de langue // URL: <http://w3.gril.univ-tlse2.fr/francopho/lecons/niveaux.html>
7. Je Revise.fr: Connaître les registres de langue et savoir adapter le niveau de langage // URL: <http://www.jerevise.fr/>

Ш. ПЕТРОСЯН – *Стилевые регистры разговорного французского языка и их отражение во фразеологических единицах.* – Любая функциональная языковая стиль не однороден, он имеет свои подстили. С этой точки зрения своими разными проявлениями в частности выделяется разговорный французский, который является многослойной системой, что находит свое яркое отражение во фразеологических единицах, которые наделены свойственной данному подстилю наглядностью и составляют неотъемлемую часть общего фразеологического запаса французского, обогащая его многообразными яркими оттенками.

Ключевые слова: стиль, подстиль, стиливые особенности, подстилевая фразеологическая единица, фразеологический запас, наглядность

Sh. PETROSYAN – *The Substyles of Colloquial French and Their Reflection in the Phraseological Units.* – No functional style of language is monolithic: each has its substyles. From this perspective, colloquial French stands out with its various unique attributes. It is a multi-level system, which has found its bright expression in the phraseological units. These units are characterized by a unique verve and expressiveness, which is typical of the given substyle, and make up the inseparable part of the general reserve of French phrases, thus, enriching it with various colourful shades.

Key words: style, substyle, style characteristics, phraseological unit, phraseological stock, expressiveness